

Քննարկված և ընդունված է
գիտական խորհրդի « 13 11 2015թ. »
թիվ 1 նիստում



Հաստատում եմ
Երևանի «Հայբուսակ» համալսարանի
Թվաթիվ՝ _____ Ս. Լ. Հարությունյան
16/11/2015թ.

**Երևանի «Հայբուսակ» համալսարանի
զարգացման
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
2016-2020թթ.**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երևանի «Հայբուսակ» համալսարանը արժևորելով իր բազմակողմանի ուղղվածությունը շարունակում է նպաստել ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձևավորմանը՝ հասարակության և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան: Եվ եթե 2010-2015թթ. Ռազմավարական ծրագիրը նախատեսված էր այնպիսի միջավայրի համար, որտեղ թե՛ ներքին և թե՛ արտաքին շահակիցները դեռևս ամբողջությամբ չէին գիտակցում իրենց շահերը, ապա 2016-2020թթ. Ռազմավարական ծրագրում դա միտված է ավելի գիտակից և պահանջկոտ միջավայրի ապահովմանը: Այստեղ կարևորվում է բարձր մրցունակությունը՝ արտաքին և ներքին շահակիցների կարիքները լավագույնս պատկերացնելու և արտահանելու: Երևանի «Հայբուսակ» համալսարանի գործունեության հիմնական մարտահրավերներն են ֆինանսական հոսքերի վերափոխում, հետազոտական գործունեության ներդրում և բարելավում, բարձրորակ կրթություն ապահովող արդիական ՄԿԾ-ների ստեղծում՝ գործող ՄԿԾ-ների բարելավման հիման վրա, շրջանավարտների մոտ ձեռնարկատիրական հմտությունների ձևավորում և այլն: Կարևորվում է ուսանողի, պրոֆեսորադասախոսական կազմի, ուսումնաօժանդակ աշխատակազմի և գործատուների կարիքների վերհանումը և համապատասխանեցումը ներկայիս աշխատաշուկային:

Երևանի «Հայբուսակ» համալսարանի կարևոր նպատակներից է կրթական ծրագրերի հիման վրա մարդկային ռեսուրսների և ֆինանսական ներուժի միջոցով որակի ապահովման ներքին համակարգի լիարժեք գործունեությամբ, գիտահետազոտական գործունեության բարելավում և արտաքին կապերի զարգացումը: Համալսարանը հաշվի առնելով կրթության ոլորտում տեղի ունեցող փոփոխությունները, նպատակ ունի վերանայելու կրթական ծրագրերի բովանդակությունը և ձևաչափը, որը առավել կբարելավի նաև կրթության որակը:

2010-2015թթ. Ռազմավարական ծրագրին համապատասխան համալսարանում ավելացել է նյութատեխնիկական բազան (համակարգիչներ և Smart գրատախտակներ), գրադարանը համալրվել է տարատեսակ գրականությունով (հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզ.), ներդրվել և բարելավվել է որակի ներքին ապահովման համակարգը (յուրաքանչյուր դեկանատում նշանակվել են որակի պատասխանատուներ, մշակվել են համապատասխան ընթացակարգեր, ռազմավարական ծրագրեր), համալրվել և նաև վերապատրաստվել են մի շարք դասախոսներ (այդ գործընթացը կրում է շարունակական բնույթ), վերհանվել են ուսանողների կարիքները ուսման ընթացքում (այդ գործընթացը նույնպես կրում է շարունակական բնույթ), ամրապնդվել և կատարելագործվել են հասարակայնության հետ կապերը:

Երևանի «Հայբուսակ» համալսարանի համար ներկայումս առաջնային է հանդիսանում ինչպես տեղական, այնպես էլ միջազգային աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կադրերի բարելավումը, փորձի շարունակական փոխանակումն ու զարգացումը: Արդիական է նաև օտարերկրյա ուսանողների կրթական ծառայությունների մատուցումը, ինչը իրականանում է կրթական ծառայությունների պահանջների մշտական վերանայման միջոցով:

Ներկայիս փոփոխությունները ՀՀ կրթության ոլորտում ազդում են բուհի կրթական համակարգի, կառավարման և որակի ապահովման քաղաքականության վրա: Մշտական և ստրատեգիկ հարցումների ընթացքում, որին մասնակցում են թե՛ ուսանողները, թե՛ պրոֆեսորադասախոսական ու վարչական աշխատակազմը և թե՛ գորտատուները, վերհանվում և բացահատվում են բուհի ուժեղ և թույլ կողմերը, որը նպաստում է համալսարանի, բոլոր առումներով, զարգացմանը:

Համալսարանը շարունակաբար բարելավում և նպաստավոր միջավայր է ստեղծում ուսանողների համար՝ ուսումնառության և այդ թվում նաև գնահատման արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Երևանի «Հայբուսակ» համալսարանը տարածաշրջանային կրթական, հետազոտական և մշակութային ինքնավար հաստատություն է, որի առաքելությունն է.

Պետության և նրա առանձին համայնքների զարգացմանն ու ամրապնդմանը նպաստող կադրերի/մասնագետների պատրաստում՝ հաշվի առնելով ՀՀ տարածաշրջանային առանձնահատկությունները և միջազգային կապերը:

ՆՊՍՏԱԿՆԵՐԸ

ա/ պատրաստել առողջապահության, կիրառական արվեստի, սոցիալ-տնտեսական և հումանիտար ոլորտների բարձրորակ կադրեր բակալավրի, մագիստրոսի և անընդհատ ու ինտեգրացված, հետազոտողի կրթական ծրագրերով,

բ/ ձևավորել բազմակողմանի զարգացած քաղաքացի, ապահովել ուսանողի հայրենասիրական դաստիարակությունը, նպաստել ազգային ու համամարդկային արժեքների, բարոյական, մշակութային և գիտական նվաճումների յուրացմանը, սերմանել հումանիզմի և ժողովրդավարության գաղափարներ,

զ/ նպաստել հասարակության տնտեսական, սոցիալական ու մշակութային առաջընթացին, ՀՀ և այլ երկրների միջև բարեկամության հաստատմանը, տնտեսական, գիտական, մշակութային կապերի ամրապնդմանը,

դ/ նպաստել ձեռնարկատիրական կրթության զարգացմանը՝ ապահովելով յուրաքանչյուր քաղաքացու ինքնաիրացման հնարավորության բացահայտմանը,

ե/ մշակել և ներդնել նոր մեխանիզմներ հատուկ կարիքավոր և խոցելի խմբերի կրթության համար:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԻՄՆԱՐԱՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ

Համալսարանն իր առաքելությունն իրագործելիս առաջնորդվում է հետևյալ արժեքներով.

1. Ուսանողի հաջողություն.

Համալսարանը կարևորում է ուսանողի կրթական ձեռքբերումները, համալսարանը օժանդակում է ուսանողի մոտ ինքնուրույն մտածողության, հետազոտական և ստորձագործական ունակությունների ձևավորմանը և զարգացմանը: Այդ իսկ պատճառով առաջնահերթ են համարվում համալսարանի կողմից ակադեմիական և ուսումնաօժանդակ ծառայությունները, կրթական և ստեղծագործական միտքը:

2. Մասնաշխարհի կրթություն.

Համալսարանը կարևորում է կրթության մասնաշխարհի կրթությունը յուրաքանչյուր սոցիալական շերտում գտնվող անհատի համար՝ տրամադրելով ֆինանսական տարատեսակ աջակցություն:

3. Ժողովրդավարություն.

ԲՈՒՀ-ին վերաբերող տարբեր հարցերի քննարկումներ իրականանում են ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի մասնակցությամբ՝ հաշվի առնելով նրանց դիտողությունները և առաջարկները:

4. Բարձրակարգ պրոֆեսորադասախոսական կազմ.

ԲՈՒՀ-ի հաջողության կարևոր գրավականներից է որակյալ պրոֆեսորադասախոսական կազմը:

5. Ակադեմիական ազնվություն.

Համալսարանը կարևորում է գրագործության, գաղտնի համաձայնության, աշխատանքի կրկնօրինակման, վստահության չարաշահման և այլ տիպի դրսևորումների ի սպառ վերացումը/բացակայությունը:

6. Մրցունակություն.

Համալսարանը կարևորում է շրջանավարտների մրցունակության բարձրացումը տվյալ աշխատաշուկային (ինչպես նաև միջազգային աշխատաշուկային) համապատասխան:

7. Հասարակական պատասխանատվություն.

Համալսարանը իր բոլոր կառույցներում ձգտում է թափանցիկության և հասարակական պատասխանատվության՝ ձգտելով դառնալ միջազգային չափանիշներին համապատասխան գիտակրթական կենտրոն:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏԵՄԼԱԿԱՆԸ

Երևանի «Հայբուսակ» համալսարանը ձգտում է իրականացնել որակյալ կրթական ծրագրեր, ուսանողամետ ուսուցում, խրախուսում և խթանում է սովորողների և աշխատողների ստեղծագործական նախաձեռնությունը՝ նպատակ ունենալով դրանք ուղղել «գիտություն-կրթություն-նորարարություն» գործընթացի իրականացմանը:

Համալսարանը ձգտում է դառնալ՝

- միջազգային չափորոշիչներին համապատասխան բարձրորակ կրթություն ապահովող և հասարակության, տնտեսության, աշխատաշուկայի հարափոփոխ պահանջներին դինամիկ ու համարժեք արձագանքող հաստատություն,
- միջազգային ճանաչում ունեցող առաջավոր գիտակրթական հաստատություն,
- սոցիալական արդարությանը հետամուտ, նաև հասարակության կարիքավոր ու անապահով շերտերին հասանելի կրթություն տրամադրող բուհ,
- իր ներքին և արտաքին շահակիցների կարծիքները հաշվի առնող, հասարակական պատասխանատվություն ստանձնող բուհ,
- արդի տեխնիկայով ու տեխնոլոգիաներով հագեցված, բարձրորակ պրոֆեսորադասախոսական կազմ ունեցող հաստատություն, որտեղ իշխում են գործընկերային, համագործակցային հարաբերություններ ուսանողների և դասախոսների միջև, ինչը գրավականն է բազմակողմանի զարգացած քաղաքացու և կոմպետենտ մասնագետի ձևավորման համար,
- ազգային ու համամարդկային արժեքներ արմատավորող ու տարածող, աշխարհի առաջավոր համալսարանների հետ համագործակցող մշակութային և գիտակրթական կենտրոն:

2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագիր

Բուհի ռազմավարությունը բխում է ՀՀ օրենսդրությունից, ՀՀ բարձրագույն կրթության բարեփոխումների ռազմավարությունից, համալսարանի կանոնադրությունից և առաքելությունից:

Համալսարանի 2016-2020 թթ. ռազմավարական նպատակներն են.

- լինել միջազգային, տարածաշրջանային և ազգային կրթական համակարգի մաս կազմող, կրթության որակի ձևավորմանը նպաստող ուսումնական հաստատություն,
- պատրաստել XXI դարի աշխատաշուկայի պահանջներին համապատասխանող որակյալ և մրցունակ մասնագետներ,
- ստեղծել նպաստավոր միջավայր անհատի բազմակողմանի և ներդաշնակ զարգացման, օրինապահ, հայրենասեր, ազատ ու պատասխանատու քաղաքացու ձևավորման համար,
- կազմակերպել տնտեսության և հասարակության զարգացման ապագա ակընկալիքներին համապատասխան կրթություն:

Առաջիկա տարիների համար որպես առաջնահերթ խնդիրներ են դիտարկվում. բարձրորակ կրթություն ապահովող, արդիական ՄԿԾ-ների ստեղծում՝ գործող ՄԿԾ-ների բարելավման հիման վրա, որակյալ կադրերի պատրաստում, կրթության որակի ներքին ապահովման համակարգի զարգացում, ուսանողակենտրոն համակարգի բարելավում, բուհի նյութատեխնիկական բազայի վերազինում, ֆինանսական կայունության և կառավարման արդյունավետության բարձրացում, ռեսուրսախնայողության և առկա միջոցների արդյունավետ օգտագործման քաղաքականության վերանայում և իրականացում, որակյալ կադրերով պրոֆեսորասասսախոսական կազմի համալրում, նրանց որակավորման բարձրացում և գիտահետազոտական գործունեության զարգացում, բուհում նպաստավոր բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովում, հասարակության հետ կապերի ամրապնդում, բուհի հասարակական պատասխանատվության բարձրացում, բուհի միջազգային կապերի խորացում:

1.Բարձրորակ կրթություն ապահովող, արդիական ՄԿԾ-ների ստեղծում՝ գործող ՄԿԾ-ների բարելավման հիման վրա, որակյալ կադրերի պատրաստում, ինչին հասնելու համար անհրաժեշտ է.

- շարունակել կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխումների իրականացումը՝ ելնելով եվրոպական, տարածաշրջանային և ազգային չափանիշներից, չափորոշիչներից, ինչպես նաև աշխատաշուկայի կարիքներից,
- ՄԿԾ-ը մշակելիս հաշվի առնել ներքին և արտաքին շահակիցների կարիքները,
- ներդնել տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգչային ծրագրեր, տվյալների բազաներ տարբեր մոդուլներում և ՄԿԾ-ներում՝ ուսումնական պրոցեսում, ինչպես նաև բժշկական ասպարեզում և կլինիկաներում կիրառելու նպատակով,
- ՄԿԾ-ների վերջնարդյունքները առավելագույնս համապատասխանեցնել ՀՀ ՈԱԾ-ի նկարագրիչների պահանջներին,
- անցկացնել ՄԿԾ-ների բենչմարքինգ ՀՀ և արտասահմանյան առաջավոր բուհերի հետ՝ հաշվի առնելով տեղական կրթական համակարգի առանձնահատկությունները,

- իրականացնել կրթական ծրագրերի փորձաքննություն՝ հիմնված դրանց մշտադիտարկման և պարբերական վերանայման ներքին չափանիշների, ընթացակարգերի վրա,
- ուսումնասիրել միջառարկայական կապերը և բացառել դրանց կրկնությունը ուսումնառության ընթացքում
- կրթական վերջնարդյունքների իրականացումը դիտել կարևորագույն խնդիր, ապահովել ուսումնառողների կողմից բոլոր ՄԿԾ-ների վերջնարդյունքներում ինչպես գիտելիքների, այնպես էլ հմտությունների ու կարողությունների ձեռքբերումը,
- գնահատման բազմագործոն համակարգը դարձնել բաց , անկողմնակալ և կիրառման տեսակետից՝ պարզ ու հասկանալի,
- կատարելագործել գնահատման համակարգը՝ հիմք ընդունելով առարկաների առանձնահատկությունները, ակնկալվող ուսումնառության արդյունքները, որը հնարավորություն կտա գնահատել նաև ակնկալվող կարողություններն ու հմտությունները:

Առաջընթացի գնահատման ցուցիչներ.

1. ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի պահանջներին համապատասխան ՄԿԾ-րի փոփոխություն:
2. Դասավանդման որակի և առարկայի վերաբերյալ ուսանողների, կրթական ծառայությունների վերաբերյալ շրջանավարտների, համալսարանի տարատեսակ ռեսուրսներ վերաբերյալ, գործատուների բավարարվածության հարցումների արդյունքների ամփոփում:
3. Բոլոր ստորաբաժանումներում ՊԻՄԲ (պլանավորում, իրականացում, ստուգում, բարելավում) շրջափուլով աշխատելու պրակտիկայի կիրառում:
4. Պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների տարբեր վերապատրաստումների իրականացում:

2. Կրթության որակի ներքին ապահովման համակարգի բարելավում և զարգացում .

- համալրել բուհի Որակի ապահովման կենտրոնի աշխատակազմը, վերանայել որակի ապահովման կառույցի աշխատակազմին ներկայացվող մասնագիտական պահանջները, կազմակերպել մասնագիտական վերապատրաստումներ, ապահովել նրանց լիազորությունների կատարման համար անհրաժեշտ մասնագիտական կարողությունների տիրապետումն ու կիրառումը,
- լրամշակել որակի ներքին ապահովման քաղաքականությունն ու ընթացակարգերը, համալսարանի կանոնակարգերը, ուղեցույցները՝ դրանք համապատասխանեցնելով ՈԱԱԿ-ի չափանիշներին ու չափորոշիչներին,

- մշակել կրթության որակի ապահովման ձեռնարկ՝ իրականացնելով բենչմարքինգ նմանատիպ այլ բուհերի ձեռնարկների հետ,
- մշակել համալսարանի և նրա «Շիրակացի» մասնաճյուղի որակի ներքին ապահովման համակարգի բարելավման ռազմավարություն՝ համալսարանի ընթացակարգերին և կառավարման կառույցների կանոնակարգերին համապատասխան,
- բուհի ղեկավարության, ֆակուլտետների ղեկանների հետ համատեղ ընտրել որակի ապահովման պատասխանատուներ, նրանց համար կազմակերպել վերապատրաստման դասընթացներ և ամբողջացնել որակի ներքին ապահովման միասնական համակարգը,
- մշակել համալսարանի գործունեության հիմնական ոլորտների ինքնագնահատման չափանիշներ՝ հիմք ընդունելով եվրոպական հավատարմագրող կազմակերպությունների և ՈԱԱԿ-ի չափանիշներն ու չափորոշիչները,
- ներդնել համալսարանի ուսումնական ու վարչական ստորաբաժանումների հաշվետվողականության համակարգ՝ կապված որակի ապահովման հարցում դրանցից յուրաքանչյուրի ունեցած դերակատարության հետ,
- մեծացնել բուհի ստորաբաժանումների պատասխանատվությունը որակի ապահովման գործընթացների շարունակականության ապահովման և արդյունավետության բարձրացման առումով,
- բարելավել բուհի պրոֆեսորասասսախոսական և վարչական կազմի իրազեկվածությունը որակի ապահովմանը ներկայացվող պահանջների ու իրականացվող գործընթացների վերաբերյալ,
- ստեղծել գործուն մեխանիզմներ ներքին և արտաքին շահակիցներին որակի ապահովման գործընթացներում մասնակից դարձնելու համար,
- ընդլայնել ներքին շահակիցների ներգրավվածությունը համալսարանի որակի ապահովման գործընթացներում՝ միտված որակի մշակույթի ամրապնդմանն ու բարելավմանը,
- վերանայել և սահմանել բուհի ստորաբաժանումների գործառույթների շրջանակը՝ այն դիտարկելով ՊԻՄԲ շրջափուլի իրականացման տեսանկյունից,
- հստակեցնել բուհում կազմակերպվող հարցումների վերլուծության արդյունքների հրապարակման մեխանիզմները՝ ապահովելով հետադարձ կապի մեխանիզմների կատարելագործման ու բարելավման անընդհատությունը,
- մշակել և ներդնել որակի ներքին ապահովման համակարգի գնահատման ու բարելավման մեխանիզմներ՝ հիմնվելով դրանց շարունակական բարելավման ու արդյունքների հուսալիության վրա:

Առաջընթացի գնահատման ցուցիչներ.

1. Ներքին և արտաքին շահակիցների հարցումներ և բարելավված արդյունքներ:
2. Բոլոր կառույցներում ՊԻՄԲ շրջափուլով աշխատելու ձևավորված պրակտիկա:
3. Թրեյնինգ կենտրոնի բարելավում, կադրերով համալրում:

3. Պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների ներգրավում հետազոտական աշխատանքներում, ա կ ա դ ե մ ի ա կ ան համագործակցության ընդլայնում և հետազոտական աշխատանքների միջազգայնացում.

- Նպաստել հետազոտությունների ծավալի մեծացմանը և հետազոտական նախագծերում դասախոսական կազմի և սովորողների ներգրավվածության ընդլայնմանը, որի համար անհրաժեշտ է.
- ✓ իրականացնել հետազոտական գործունեության գնահատում՝ առաջնորդվելով գիտական հրատարակումներով, դրանց վրա կատարված հղումներով և այլ ընդունված ցուցանիշներով,
- ✓ Ընդլայնել հետազոտական աշխատանքներում մագիստրատուրայում և ասպիրանտուրայում սովորողների մասնակցությունը,
- ✓ խրախուսել ՈւԳԸ շրջանակներում գիտահետազոտական աշխատանքների ղեկավարումը,
- ✓ բարելավել հետազոտական բաղադրիչի իրականացումը բոլոր կրթական ծրագրերում:

Առաջընթացի գնահատման ցուցիչներ.

5. Գիտահետազոտական գործունեության արդյունավետության գնահատման ցուցանիշների սանդղակ:
6. Գիտահետազոտական ծրագրերում ներգրավված ասպիրանտների և մագիստրոսների թվի աճ:
7. ՈւԳԸ գիտաժողովներում մասնակիցների թվի աճ:

- նպաստել դասախոսների համագործակցությունը հանրապետության և արտերկրի գիտահետազոտական ինստիտուտների, բուհերի և ձեռնարկությունների հետ, հող նախապատրաստելով Համալսարանի ներգրավմանը միջազգային հետազոտական ծրագրերին, որի համար անհրաժեշտ է.
- ✓ ներգրավել հանրապետության առաջատար գիտաշխատողներին մագիստրատուրայում և ասպիրանտուրայում սովորողների հետազոտական աշխատանքների ղեկավարման գործում,
- ✓ աջակցել դասախոսներին գիտահետազոտական կենտրոնների հետ համատեղ ծրագրերի իրականացմանը,

- ✓ իրախուսել արտերկրի հետազոտական կենտրոնների հետ համալսարանի ֆակուլտետների համագործակցությունը,
- ✓ իրախուսել միջազգային գիտական ամսագրերում Համալսարանի աշխատողների հրապարակումները և օժանդակել արտասահմանյան գիտաժողովներին աշխատողների մասնակցությամբ:

<i>Առաջընթացի գնահատման ցուցիչներ.</i>
1. Ձեռնարկությունների մասնակցությամբ հետազոտական և կրթական ծրագրերի ու դրանց մասնակիցների թվի աճ:
2. Միջազգային ամսագրերում հրապարակումների թվի աճ:
3. Միջազգային գիտաժողովներին մասնակցած աշխատողների թվի աճ:
4. Միջազգային ծրագրերին և գիտական նախագծերին դասախոսներ մասնակցության թվի աճ:

- կազմակերպել Համալսարանի ասպիրանտուրայում ընդունելություն՝ բժշկագիտություն և տնտեսագիտություն մասնագիտություններով, որի համար անհրաժեշտ է.
- ✓ ֆակուլտետների խորհուրդներում հաստատել հետազոտական արդիական թեմաներ և ղեկավարներ,
- ✓ հայտարարել ասպիրանտուրայի ընդունելություն համապատասխան մասնագիտություններով:

4. Ուսանողակենտրոն համակարգի բարելավում .

- համալսարանում վերջնականորեն արմատավորել ուսանողակենտրոն կրթական համակարգը, կանոնավոր կիրառել հետադարձ կապի մեխանիզմներ, բացահայտել սովորողների կարիքները և ուսումնական գործընթացը կատարելագործելու միջոցով հասնել որակյալ կրթության ապահովման,
- մշտապես հոգ տանել կրթական գործընթացների վերաբերյալ ուսանողների իրազեկվածության ապահովման մասին,
- կրթական գործընթացը դարձնել բաց, թափանցիկ, հասկանալի բոլոր շահակիցների համար:

<i>Առաջընթացի գնահատման ցուցիչներ.</i>
1. Ուսանողների կարիքների վերհանում՝ հարցումների, առաջարկների և դիտողությունների տեսքով:
2. ՈԻԳԸ գիտաժողովների մասնակիցների թվի աճ:
3. Գիտահետազոտական ծրագրերում մագիստրանտների և ասպիրանտների թվի աճ:
4. Գիտական հանդեսներում ուսանողների և ասպիրանտների հոդվածների թվի աճ:
5. Լրացուցիչ կրթական դասընթացների թվի աճ:

5.Բուհի նյութատեխնիկական բազայի նորացում.

- բացել նոր լաբորատորիաներ, մասնագիտական կաբինետներ, եղած բազան վերազինել ժամանակակից սարքավորումներով,
- համալսարանի գրադարանը համալրել ժամանակակից մասնագիտական գրականությամբ (հայերեն և օտար լեզուներով),
- մշակել տեղեկատվության կառավարման քաղաքականություն՝ ներդնելով ներքին փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգ, որը հնարավորություն կընձեռնի ապահովել արագ և թափանցիկ գործունեություն,
- անընդհատ բարելավել տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարումը:
- ժամանակակից չափորոշիչներին համապատասխան զարգացնել տեղեկատվական ռեսուրսները և բարձրացնել դրանց օգտագործման արդյունավետությունը,
- մշակել և իրականացնել ռեսուրսախնայողության և առկա հնարավորությունների արդյունավետ օգտագործման քաղաքականություն,
- մշակել ռեսուրսների և կրթական միջավայրի համապատասխանության գնահատման հստակ գործող մեխանիզմներ՝ հաշվի առնելով նաև ՊԻՄԲ շրջափուլի բոլոր բաղադրիչների արդյունավետ իրականացման անհրաժեշտությունը:

<p style="text-align: center;">Առաջընթացի գնահատման ցուցիչներ.</p> <ol style="list-style-type: none">1. Վերանորոգված ուսումնական մասնաշենքեր:2. Տեխնոլոգիապես վերազինված լսարաններ, կաբինետներ, հետազոտական և ուսումնական լաբորատորիաներ:3. Ժամանակակից սարքավորումներով կահավորված մարզադահլիճ:4. Նորակառույց կլինիկա

6.Բուհի ֆինանսական կայունության և կառավարման արդյունավետության բարձրացում.

- ակտիվացնել համալսարանի հասարակայնության հետ կապերի բաժնի, միջազգային կապերի վարչության, օտարերկրյա ներկայացուցչությունների, Գյումրու «Շիրակացի» մասնաճյուղի գործունեությունը բուհի ուսանողական համակազմի համալրման աշխատանքների արդյունավետության բարձրացման ուղղությամբ,
- մեծացնել առկա ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետությունը,

- հայթայթել կրթաթոշակներ ՀՀ և արտերկրի գործարարների կողմից, հանրապետության մարզպետներից, քաղաքապետներից ստանալ աջակցություն սոցիալապես անապահով ուսանողների համար,
- մասնակցել դրամաշնորհային ծրագրերի,
- ավելացնել անվճար (բուհ-ի հաշվին) տեղերի քանակը,
- հիմնել և շնորհել նոր անվանական կրթաթոշակներ,
- հստակեցնել բուհի կառավարման ու վարչական ստորաբաժանումների գործունեությունը, բարձրացնել նրանց պատասխանատվությունը բուհի առաքելության իրականացման համար՝ հաշվի առնելով նաև ՊԻՄԲ շրջափուլի բոլոր բաղադրիչների արդյունավետ իրականացման հրամայականը:

Առաջընթացի գնահատման ցուցիչներ.

1. Համախառն եկամուտ:
2. Զուտ շահույթ:
3. Ֆինանսական ոլորտի վերապատրաստված աշխատողներ:

7.Ռեսուրսախնայողության և ստկա միջոցների արդյունավետ օգտագործման քաղաքականության վերանայում և իրականացում.

- բարեփոխել ֆինանսական պլանավորման գործընթացը ելնելով ռազմավարական նպատակներից և խնդիրներից,
- ռազմավարական պլանավորման մեջ ներառել համալսարանի գործունեության բոլոր բնագավառները,
- իրականացնել նյութատեխնիկական միջոցների, ֆինանսական ռեսուրսների և աշխատանքի վարձատրության պլանավորում (մոտակա տարիների համար),
- իրականացնել համալսարանի բյուջետային պլանավորման այնպիսի գործընթաց, որը կապահովի ֆինանսական ռեսուրսների արդյունավետ ու թափանցիկ բաշխում և բոլոր բնագավառների կառավարման գործընթացների համաձայնեցումը,
- համալսարանի զարգացման կարիքներին համապատասխան մեծացնել ֆինանսական միջոցների ներհոսքը և բազմազանեցնել դրանց աղբյուրները,
- զարգացնել և իրականացնել համալսարանի ծրագրերի և ծառայությունների մարկետինգային քաղաքականություն գործունեության բոլոր բնագավառներում,

- ընդլայնել կրթական, գիտական ու տեղեկատվական վճարովի ծառայությունների ցանկը և բարձրացնել դրանց եկամտաբերությունը, մեծացնել այս ուղղությամբ ստացված միջոցների հաշվեկշիռը համալսարանի եկամուտների ծավալում,
- ընդլայնել և զարգացնել մատուցվող ծառայությունների տեսակները ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում,
- ակտիվացնել համալսարանի մասնակցությունը կրթական, հետազոտական և հանրային ծառայությունների ոլորտներում հայտարարվող միջազգային դրամաշնորհային ծրագրերին,
- ինքնարժեքի վերլուծության հիման վրա ձևավորել ըստ կրթական ծրագրերի և մասնագիտությունների ուսման վարձի հաշվարկի մեթոդաբանություն՝ առաջնորդվելով մասնագիտության տնտեսական նպատակահարմարության, անհրաժեշտ եկամտաբերության և մրցունակության աստիճանով:

Առաջընթացի գնահատման ցուցիչներ.

1. Մշակել և ներդնել ֆինանսական և նյութական ռեսուրսների օգտագործման արդյունավետության գնահատման համակարգ:
2. Իրականացնել ռեսուրսախնայողության հետևողական քաղաքականություն: Մշակել և ներդնել էլեկտրաէներգիայի, գազի, ջրի, հեռախոսակապի և այլ նյութական ռեսուրսների խնայողության տեխնիկական և կազմակերպչական միջոցներ:
3. Իրականացնել ֆինանսատնտեսական գործունեության թափանցիկությունը, ֆինանսական գործունեության արդիականացումն ապահովող միջոցառումներ:

8. Որակյալ կադրերով պրոֆեսորասափոսական կազմի համալրում, նրանց որակավորման բարձրացում և գիտահետազոտական գործունեության զարգացում.

- իրականացնել համալսարանի և Գյումրու «Շիրակացի» մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական կարողությունների և մանկավարժական հմտությունների գնահատման գործընթացներ,
- ուսումնասիրել և տարածել առաջավոր փորձը, արմատավորել նորարարությունը,
- խրախուսել առաջավոր դասախոսներին, կազմակերպել մասնագիտական և մանկավարժական-մեթոդական վերապատրաստումներ, անգլերեն լեզվի դասընթացներ, ինչի արդյունքում կունենանք

- ✓ անգլերեն լեզվով հաղորդակցվելու հմտության ձեռքբերում՝ դրանով իսկ մեծացնելով օտարերկրյա ուսանողների համակազմը բուհի կրթական ծրագրերում,
- ✓ տեղեկատվական տեխնոլոգիաների տիրապետում,
- ✓ դասավանդման, ուսումնառության ու գնահատման ժամանակակից մեթոդների տիրապետում,
- ✓ մանկավարժական-հոգեբանական անհրաժեշտ հմտությունների ձեռքբերում,
- ✓ դասախոսների տարբերակված վարձատրում:
 - մշակել համալսարանի՝ հետազոտության ոլորտի հետաքրքրություններն ու հավակնություններն արտացոլող քաղաքականություն,
 - գերակա գիտական ուղղություններում՝ ֆիտոթերապիայի և Հայաստանի դեղաբույսերի ոլորտներում ընդլայնել հետազոտական գործունեությունը, ավելացնել ուսանողների մասնակցությունը,
 - խորացնել “Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ” ՓԲԸ “ԱլտՄեդ” վերականգնողական և ավանդական բժշկության բաժանմունքի հետ համագործակցությունը, հաստատել նոր կապեր այլ համանման հաստատությունների հետ,
 - ակտիվացնել համալսարանի ամբիոններում տարվող գիտահետազոտական աշխատանքները, ընդլայնել դրանց մեջ ուսանողների մասնակցությունը,
 - նպաստել տնտեսագիտության ամբիոնում իրականացվող գիտահետազոտական ծրագրերի շարունակականությանը, դրանցում դասախոսների և ուսանողների մասնակցությանը,
 - խրախուսել բուհի պրոֆեսորադասախոսական կազմի և երիտասարդ հետազոտողների ավելի ակտիվ ներգավումը գիտահետազոտական, ինչպես նաև գիտական գործունեության միջազգայնացմանն ուղղված աշխատանքներում,
 - ընդլայնել գիտահետազոտական գործունեությունը և ամրապնդել գիտահետազոտական ինստիտուտների և բուհերի համագործակցությունը,
 - խթանել գիտական հրապարակումները գրախոսվող և բարձր ազդեցության գործակից սուստեցող միջազգային առաջատար գիտական պարբերականներում: Օժանդակել գիտական և ուսումնամեթոդական աշխատությունների հրատարակմանը, գիտական աստիճանների ու կոչումների ձեռքբերմանը,
 - ապահովել հետազոտության և ուսումնական գործընթացի կապը՝ նպաստելով ուսանողների քննադատական մտածողության զարգացմանը և հետազոտական աշխատանքներում ուսանողների ակտիվ ներգրավվածությանը,
 - ակտիվացնել ուսանողական գիտական ընկերության գործունեությունը,

- բոլոր մասնագիտությունների գծով ընդլայնել լրացուցիչ կրթական ծրագրերով սովորողների քանակը, կյանքի կոչել հետազոտողի կրթական ծրագրերը՝ կազմակերպելով ասպիրանտուրայի ընդունելություն:

Առաջընթացի գնահատման ցուցիչներ.

1. Պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողների ինչպես նաև գործատուների մասնակցությամբ հետազոտական և կրթական ծրագրերի իրականացում ու դրանց մասնակիցների թվի աճ:
2. Միջազգային դրամաշնորհային ծրագրերի և գիտական նախագծերի թվի աճ:
3. Դասախոսների կողմից միջազգային գիտաժողովներին և սեմինարներին մասնակցության թվի աճ:
4. Դասախոսների վերապատրաստումների թվի աճ:

9.Բուհում նպաստավոր բարոյահոգեբանական մթնոլորտի հետագա բարելավում.

- համալսարանում ապահովել առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ, հասնել էթիկայի կանոնների հավուր պատշաճի հարգման և պահպանման,
- էթիկայի հանձնաժողովի կանոնակարգված գործունեության միջոցով հասնել բոլոր ծագող տարաձայնությունների փոխընդունելի լուծումների,
- ամրապնդել կոլեկտիվում ձևավորված համագործակցային հարաբերությունները, փոխադարձ հարգանքը՝ ի նպաստ կրթության որակի և բուհի առաջընթացի:

Առաջընթացի գնահատման ցուցիչներ.

1. Համալսարանի աշխատակիցների աշխատավարձի բարձրացում՝ միջինում մինչև 30 %:
2. Սոցիալական ծրագրերի բազմազանեցված տեսականի և սոցիալական ծախսերի ավելացում:
3. Տարատեսակ մարզամշակութային ծրագրեր:

10.Հասարակության հետ կապերի ամրապնդում, բուհի հասարակական պատասխանատվության բարձրացում.

- կատարելագործել «Հայբուսակ» համալսարանի ինտերնետային կայքը և մատչելի դարձնել համալսարանի մասին տեղեկատվությունը,
- ընդլայնել հանրային միջոցառումների ցանկը, մասնակցությունն ու որակը,

- բարձրացնել ուսանողների ռազմահայրենասիրական դաստիարակության մակարդակը, խորացնել համալսարանի համագործակցությունը ՀՀ Պաշտպանության նախարարության հետ «Ազգ-բանակ» հայեցակարգի շրջանակներում,
- պարբերաբար գնահատել հասարակական պատասխանատվության տեսանկյունից բուհի գործունեության արդյունավետությունը,
- բարձրացնել բուհի մասնակցության աստիճանը համայնքի զարգացմանն ուղղված միջոցառումներում:

Առաջընթացի գնահատման ցուցիչներ.

1. ՁԼՄ-ներում համալսարանի վերաբերյալ նպատակային և դրական լուսաբանումների թվի աճ.
2. Կայքի հղումների ավելացում 50 %-ով և մասնակիցների թվի աճ.

11. Բուհի միջազգային կապերի խորացում.

- մշակել բուհի միջազգայնացման հստակ քաղաքականություն և ընթացակարգեր՝ ելնելով համալսարանի առաքելությունից և ռազմավարական ծրագրից,
- կազմել ծրագրեր՝ բուհի միջազգայնացման քաղաքականությունը կենսագործելու, միջազգային համագործակցությունն ընդլայնելու, կրթական գործընթացներում օտարազգի ուսանողների ներգրավվածության մակարդակը բարձրացնելու նպատակով,
- խթանել կրթական, գիտական, մշակութային համագործակցությունը արտերկրի համալսարանների, գիտական, մշակութային հաստատությունների հետ,
- ընդլայնել ուսանողների և դասախոսների միջազգային շարժունությունը,
- գնահատել համագործակցության պայմանագրերով ստանձնած գործառութային պարտականությունների և իրականացրած միջոցառումների արդյունավետությունը՝ համագործակցության պայմանագրերի ոչ լիարժեք կատարման ռիսկերը նվազեցնելու համար:

Առաջընթացի գնահատման ցուցիչներ.

1. Միջազգայնացման հայեցակարգ:
2. Հրավիրյալ դասախոսների/պրոֆեսորների թվի աճ:
3. Օտար լեզուներով ՄԿԾ-ների թվի աճ:
4. Կրկնակի դիպլոմներով տարատեսակ ծրագրեր, համատեղ կրթական ծրագրեր:
5. Պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների ուսուցման և վերապատրաստման թվի աճ: